

## Էխինոկոկոզ

**Հիվանդության բնորոշումը.** Էխինոկոկոզը գյուղատնտեսական, վայրի կենդանիների և մարդու խիստ տարածված ճիճվային հիվանդություն է, որը հարուցվում է Taeniidae ընտանիքին պատկանող տափակ որդերի թրթուրների կողմից: Թրթուրները (բշտերը) հիմնականում տեղակայվում են լյարդում, թոքերում և օրգանիզմի համարյա բոլոր օրգաններում ու հյուսվածքներում:

### ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

**Հարուցիչ կենսակերպը.** Հարուցիչ վերջնական տերերն են շունը, գայլը, որոնք արտաքին միջավայր են արտազատում ձվերով լեցուն հարուցիչ հասուն հատվածներ, որոնք օժտված են շարժվելու ունակությամբ: Շարժման ժամանակ պատռվում են, և շրջապատը վարակվում է ձվերով:

Միջանկյալ տերերը վարակվում են կերի կամ ջրի հետ կուլ տալով հարուցիչ հատվածները կամ ձվերը, որոնք տարածվում են բոլոր օրգաններում և հյուսվածքներում ու դառնում բուշտ: Տավարի և ձիերի մոտ բշտերի 90%-ը հայտնաբերվում են լյարդում, ոչխարների մոտ՝ 70%-ը թոքերում:

Վերջնական տերերը՝ շուն, գայլ, վարակվում են ուտելով էխինոկոկի բշտերով վարակված միջանկյալ տերերի (տավար, ոչխար և այլն) ներքին օրգանները:

**Կլինիկական նշանները.** Կենդանիները նիհարում են և հյուծվում: Կլինիկական պայմանավորված է այն հանգամանքով, թե բուշտը որ օրգանում է տեղակայված: Եթե բուշտը լյարդում է, ապա նկատվում է լորձաթաղանթի դեղնություն, մարսողության պարբերական խանգարումներ, իսկ եթե այն տեղակայված է թոքերում, ապա արձանագրվում են շնչառության արագացում, դժվարացում, շնչահեղձություն և հազ: Կենդանիները սաստկում են խիստ հյուծման հետևանքով:

**Կանխարգելումը.** Այս հիվանդությունը կանխարգելելու նպատակով արգելվում է.

- Գյուղատնտեսական կենդանիների մորթը պատահական վայրերում, առանց անասնաբույժների մասնակցության:
- Ախտահարված օրգանները անհրաժեշտ է հավաքել և ոչնչացնել:
- Արգելվում է շների կերակրել կանդանիների (միջանկյալ տերերի) էխինոկոկի բշտերով ախտահարված ներքին օրգաններով (կամ պետք է անպայման եռացնել և հետո տալ):
- Շներին, որպես հիվանդության տարածման հիմնական աղբյուր, հարկավոր է բուժել կանխարգելիչ ճիճվաթափություններով: Բուժման/կանխարգելիչ ճիճվաթափման նպատակով նշանակում են ճիճվամուղ դեղամիջոցներ (ազինոկս պլյուս, ալբեն՝ 1 հաբը 10 կգ քաշին, արեկոլին, պրազիկվանտել և այլն): Ճիճվամուղ դեղամիջոցը տալուց հետո շներին 48 ժամ պահում են փակ շենքում, կղանքը հավաքում և ոչնչացնում են (անպայման այրում են, հակառակ դեպքում արտազատված էխինոկոկոզի ձվերը վարակի աղբյուր կդառնան ինչպես կենդանիների, այնպես էլ մարդկանց համար): Կանխարգելիչ ճիճվաթափությունը պետք է իրականացնել 45 օրը մեկ անգամ:
- Էխինոկոկոզի կանխարգելման համար լավ արդյունք են տալիս կենդանիների՝ մատղաշ հասակից իվերմեկի պարբերաբար ներարկումները (տարեկան 2 անգամ):